

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետեւ՝ Պայմանավորվող կողմեր, ցանկանալով բարենպաստ պայմաններ ստեղծել մի Պայմանավորվող կողմի տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների իրականացման համար, ընդունելով, որ սույն Համաձայնագրի վրա հիմնված ներդրումների խրախուսումը եւ փոխադարձ պաշտպանությունը կխթանեն կապիտալի հոսքը եւ կնպաստեն առեւտրատնտեսական եւ գիտատեխնիկական փոխշահավետ համագործակցության զարգացմանը, համաձայնեցին հետեւյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար հետեւյալ հասկացությունները նշանակում են.

1. "Ներդրող" (յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար)՝
 - ա) ցանկացած ֆիզիկական անձ, որը այդ Պայմանավորվող կողմ հանդիսացող պետության քաղաքացի է,
 - բ) ցանկացած իրավաբանական անձ, որը ստեղծվել է կամ հիմնվել է այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան:
2. "Ներդրումներ" - գույքային արժեքների բոլոր տեսակները, որոնք մի Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից ներդրվում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ վերջինիս օրենսդրությանը համապատասխան, եւ, մասնավորապես.
 - ա) շարժական եւ անշարժ գույք,
 - բ) բաժնետոմսեր, բաժնեմասեր եւ մասնակցության այլ ձեւեր առեւտրային կազմակերպությունների կապիտալում,
 - գ) տնտեսական արժեքների ստեղծման նպատակով ներդրված կամ տնտեսական արժեք ունեցող եւ ներդրման հետ կապված պայմանագրերից բխող դրամական միջոցների պահանջի իրավունք,
 - դ) մտավոր սեփականության օբյեկտների բացառիկ իրավունքներ (հեղինակային իրավունք, գյուտի իրավունք, արդյունաբերական նմուշներ, մոդելներ, առեւտրային նշաններ կամ սպասարկման նշաններ, տեխնոլոգիաներ, կոմերցիոն արժեք ունեցող տեղեկատվություն եւ նուր-հաուն),
 - ե) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքներ՝ օրենսդրությամբ կամ պայմանագրով տրամադրված, ներառյալ, մասնավորապես, կապված բնական պաշարների հետախուզման, մշակման, ձեռք բերման կամ շահագործման հետ:Կապիտալների ներդրման ձեւերի որեւէ փոփոխություն չի ազդի դրանց դասակարգմանը որպես "ներդրումների"՝ պայմանով, որ այդ փոփոխությունը չի հակասի այն Պայմանավորվող կողմի օրենսդրությանը, որի տարածքում իրականացվել է ներդրումը:
3. "Եկամուտ" - ներդրումների արդյունքում ստացված գումարները եւ, մասնավորապես, շահույթը, շահաբաժինը, տոկոսները, արտոնագրային եւ այլ պարգեւատրումները:
4. "Պայմանավորվող կողմի տարածք" - Հայաստանի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության տարածքը, ինչպես նաեւ նրանց բացառիկ տնտեսական գոտիները եւ մայրցամաքային շելֆը՝ համաձայն ՄԱԿ-ի "Ծովային իրավունքի վերաբերյալ" Կոնվենցիայի (1982թ.):
5. "Պայմանավորվող կողմի օրենսդրություն" - Հայաստանի Հանրապետության օրենքները եւ այլ նորմատիվաիրավական ակտերը կամ Ռուսաստանի Դաշնության օրենքները եւ այլ նորմատիվաիրավական ակտերը:

ՀՈԴՎԱԾ 2
Ներդրումների պաշտպանություն

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է ստեղծել բարենպաստ պայմաններ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների իրականացման համար եւ թույլատրում է այդպիսի ներդրումները՝ համաձայն իր օրենսդրության:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենսդրությանը համապատասխան, երաշխավորում է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումների ամբողջական պաշտպանությունը:

ՀՈԴՎԱԾ 3
Օտարում

1. Պայմանավորվող կողմերից մեկի ներդրողների կողմից կատարված ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ենթակա չեն հարկադիր առգրավման միջոցառումների՝ ըստ հետեւանքների հավասարազոր սեփականազրկման կամ ազգայնացման (այսուհետեւ՝ սեփականազրկում), բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումները իրականացվում են կարգի պահպանման դեպքում, հասարակության շահերից ելնելով, այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվում են առանց խտրականության եւ ուղեկցվում են արագ, համարժեք ու արդյունավետ փոխհատուցման վճարմամբ:

2. Փոխհատուցումը պետք է համապատասխանի սեփականազրկված ներդրումների շուկայական արժեքին՝ հաշվարկված սեփականազրկման փաստացի իրականացման կամ նախատեսվող սեփականազրկման մասին պաշտոնապես հայտնի դառնալու պահից: Փոխհատուցումը վճարվում է առանց ուշացման, ազատ փոխարկելի արժույթով եւ ազատորեն փոխանցվում է մի Պայմանավորվող կողմի տարածքից մյուս Պայմանավորվող կողմի տարածք: Սեփականազրկման պահից մինչեւ վճարման պահը փոխհատուցման գումարին կգումարվեն շուկայական հիմքով ձեւավորված առեւտրային դրույքաչափով տոկոսներ, բայց դուրային վեցամսյա վարկի գծով՝ LIBOR տոկոսադրույքից ոչ պակաս:

ՀՈԴՎԱԾ 4
Վնասի փոխհատուցում

Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնք ներդրումներին վնաս է հասցված մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի, քաղաքացիական անկարգությունների կամ նմանատիպ այլ դեպքերի հետեւանքով, վնասների վերականգնման, փոխհատուցման կամ այլ տիպի կարգավորման հետ կապված տրամադրվում է ռեժիմ՝ ամենից բարենպաստը նրանցից, որոնք վերջին Պայմանավորվող կողմը տրամադրում է երրորդ կամ իր սեփական ներդրողներին այն միջոցառումների առնչությամբ, որոնք ձեռք են առնվում նրա կողմից այդպիսի վնաս կրելու դեպքում:

ՀՈԴՎԱԾ 5
Վճարումների փոխանցում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին նրանց կողմից բոլոր հարկային պարտավորությունների կատարումից հետո ներդրումների հետ կապված բոլոր վճարումների ազատ փոխանցում արտասահման, եւ, մասնավորապես.

ա) եկամուտները,

բ) երկու Պայմանավորվող կողմերի կողմից որպես ներդրում ճանաչվող փոխառությունների եւ վարկերի մարման դիմաց վճարվող գումարները, ինչպես նաեւ հաշվարկված տոկոսները,

գ) ներդրումների ամբողջական կամ մասնակի լուծարումից կամ վաճառքից ստացվող միջոցները,

դ) սույն Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման գումարները,

ե) աշխատավարձերը եւ այլ դրամական պարգեւները, որոնք ստացվել են մյուս Պայմանավորվող կողմի այն ներդրողի եւ ֆիզիկական անձանց կողմից, որոնք թույլատրված է ներդրումների հետ կապված աշխատել առաջին Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Փոխանցումները իրականացվում են առանց ուշացումների, ազատ փոխարկելի արժույթով, փոխանցման իրականացման օրվա փոխանակման դրույքաչափով՝ համաձայն այն Պայմանավորվող կողմի արժույթային կարգավորման օրենսդրության, որի տարածքում իրականացվել են ներդրումները:

ՀՈԴՎԱԾ 6 Սուբրոգացիա

Պայմանավորվող կողմը կամ նրա լիազոր մարմինը, որոնք վճարում են իրականացրել ներդրողին մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրումների ոչ առետրային ռիսկի երաշխավորման հիման վրա, սուբրոգացիայի կարգով կարող են իրականացնել ներդրողի իրավունքները նույն ծավալով, որքանով ներդրողն ինքը: Այդ իրավունքները իրականացվում են վերջին Պայմանավորվող կողմի օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 7

Մի Պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ վեճերի կարգավորումը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողի եւ մյուս Պայմանավորվող կողմի միջեւ վեճերը, որոնք ծագում են առաջին Պայմանավորվող կողմի տարածքում՝ տվյալ ներդրողի ներդրման հետ կապված, ներառյալ վեճերը՝ կապված սույն Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման վճարումների չափի, պայմանների կամ վճարման կարգի կամ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված վճարումների փոխանցումների իրականացման կարգի հետ, հնարավորության սահմաններում լուծվում են բանակցությունների միջոցով:

2. Եթե վեճը չի կարող լուծվել բանակցությունների միջոցով վեճի կողմերից յուրաքանչյուրի՝ այն բանակցային ճանապարհով լուծելու խնդրանքի ամսաթվից սկսած 6 (վեց) ամսվա ընթացքում, ապա այն ներդրողի ցանկությամբ կարող է ներկայացվել այն Պայմանավորվող կողմի իրավասու դատավարության կամ էլ միջնորդ դատարանի (արբիտրաժի) դիտարկմանը, որի տարածքում կատարվել են ներդրումներ, կամ ad hoc արբիտրաժային դատարան՝ համաձայն ՄԱԿ-ի Միջազգային առետրային իրավունքի հանձնաժողովի կողմից հաստատված Արբիտրաժային կանոնների (UNCITRAL), կամ՝ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն, որը ստեղծվել է համաձայն 1965 թ. մարտի 18-ին Վաշինգտոնում ստորագրված՝ Պետությունների եւ այլ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջեւ ներդրումային վեճերի կարգավորման Կոնվենցիայի, նշված Կոնվենցիայի դրույթներին համապատասխան վեճի կարգավորման համար (պայմանով, որ այն ուժի մեջ է մտել երկու Պայմանավորվող կողմերի համար), կամ՝ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի Լրացուցիչ կանոններին համապատասխան (այն դեպքում, եթե Կոնվենցիան ուժի մեջ չի մտել երկու Պայմանավորվող կողմերի կամ նրանցից մեկի համար):

3. Միջնորդ դատարանի վճիռը վերջնական էւ պարտադիր է վեճին մասնակից երկու կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է ապահովել այդպիսի վճիռի կատարումը՝ իր օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8 Պայմանավորվող կողմերի միջեւ վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված վեճերը լուծում են բանակցությունների ճանապարհով: Եթե այդ ճանապարհով վեճը չի կարգավորվել բանակցությունների սկիզբ առնելուց 6 (վեց) ամսվա ընթացքում, ապա ցանկացած Պայմանավորվող կողմի պահանջով վեճը կներկայացվի միջնորդ դատարանին:

2. Յուրաքանչյուր առանձին դեպքի համար ստեղծվում է միջնորդ դատարան, որի համար արբիտրաժային դատավարության մասին ծանուցում ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է միջնորդ դատարանի մեկ անդամ: Այնուհետեւ այդ երկու անդամները ընտրում են երրորդ երկրի քաղաքացու, որը դատարանի առաջին երկու անդամների նշանակման օրից 1 (մեկ) ամսվա ընթացքում երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ նշանակվում է միջնորդ դատարանի նախագահ:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամանակահատվածում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, ապա այլ պայմանավորվածության բացակայության դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիմել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահին՝ այդ նշանակումներն իրականացնելու խնդրանքով: Եթե Միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի կամ այլ պատճառներով չի կարող իրականացնել նշված խնդրանքը, ապա անհրաժեշտ նշանակումներն իրականացնել առաջարկվում է Միջազգային դատարանի նախագահի տեղակալին: Եթե Միջազգային դատարանի նախագահի տեղակալը նույնպես հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի կամ այլ պատճառներով չի կարող իրականացնել նշված խնդրանքը, ապա անհրաժեշտ նշանակումներն իրականացնել առաջարկվում է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի այլ անդամի, ում պաշտոնը հաջորդում է վերոհիշյալ անձանց, եւ որը չի հանդիսանում որեւէ Պայմանավորվող կողմի քաղաքացի:

4. Միջնորդ դատարանն իր որոշումն ընդունում է ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշումը վերջնական է եւ պարտադիր Պայմանավորվող կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կրում է իր կողմից նշանակված դատարանի անդամի գործունեության եւ միջնորդ դատարանում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Դատարանի նախագահի գործունեության հետ կապված, ինչպես նաեւ այլ ծախսերը Պայմանավորվող կողմերը կրում են հավասարաչափ: Սակայն դատարանը իր որոշման մեջ կարող է նախատեսել, որ Պայմանավորվող կողմերից մեկը կրի ծախսերի ավելի մեծ մասը, եւ այդ որոշումը պարտադիր կլինի Պայմանավորվող կողմերի համար: Միջնորդ դատարանը ինքն է սահմանում իր գործողությունների ընթացակարգը:

ՀՈԴՎԱԾ 9 Խորհրդակցություններ

Ցանկացած Պայմանավորվող կողմի խնդրանքով խորհրդակցություններ կանցկացվեն սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հարցերի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 10 Համաձայնագրի կիրառումը

Սույն Համաձայնագիրը վերաբերում է բոլոր ներդրումներին, որոնք սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո իրականացվել են մի Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

ՀՈԴՎԱԾ 11 Համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ տեւողությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ գրավոր ծանուցում է մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է

մտնում երկու ծանուցումներից վերջինի ստացման ամսաթվից:

2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կլինի 15 (տասնհինգ) տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հերթական հնգամյա ժամանակահատվածներով, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը մյուս Պայմանավորվող կողմին նշված ժամկետի լրանալուց առնվազն 12 (տասներկու) ամիս առաջ գրավոր չձանուցի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել ուղղումներ Պայմանավորվող կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ: Ցանկացած ուղղում ուժի մեջ կմտնի այն բանից հետո, երբ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ գրավոր կձանուցի մյուս Պայմանավորվող կողմին այդպիսի ուղղման ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական բոլոր ընթացակարգերի կատարման մասին:

4. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչեւ սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, եւ որոնք գտնվում են նրա կարգավորման ոլորտում, սույն Համաձայնագրի մյուս բոլոր դրույթները կմնան ուժի մեջ նրա դադարեցման ամսաթվից հետո հաջորդ տասնհինգ 15 (տասնհինգ) տարիների ընթացքում:

Կատարված է Երեւան քաղաքում 2001 թ. սեպտեմբերի 15-ին՝ երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ ռուսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. փետրվարի 8-ից: